

ՀՆԴԿԱՅԻՆ ՎԵՊ

ԷԼՈՐԱՅԻ ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ՊԱԼԱՏԸ

...~*~*~...



ՈՄՊԷՅ հասնելէս վերը շատե-
րէն կը լսէի Էլորայի լերանց դար-
մանալիքն և անոնց ստորերկրեայ
Հոյակապ պալատները: Հետաքրքրու-
թիւնս զիս կը մղէր այցելութիւնս փու-
թացնելու. բայց միջոցները կը պակսէին,
սակայն ամեն ջանք ընելու էի օր մը յառաջ
այն հրաշագործ ու խորհրդաւոր բնակարան-
ները երթալու տեսնելու, որ ինծմէ միայն
աւուր մը ճանապարհ մեկուսի կը գտնուէին:
Վերջապէս որոշմունքս ըրի միայնակ ձեռ-
նարկել այն արշալանքը. պատրաստութիւնս
տեսայ. ուշտ մը պաշարներով բռնաւորե-
ցի, հետո տեղացի պահապան առի, և իբր
ընկեր և առաջնորդ՝ պրահմին մը: Այսպէս
կազմ ու պատրաստ ճամբայ ելայ և առանց
ծանր նեղութեան դիտած տեղս հասայ:

Էլորայ լեռները գեղեցիկ շղթայ մը կը
կազմեն. իրենց վրայէն գետ մը կը հոսէ, որ
իրենցմէ ալ բարձրագոյն ժայռէ մը բոխելով
ընդարձակ ջրվեժներ կը ձևացնէ, ոչք ժայռէ
ի ժայռ ոստոստելով՝ մինչև վարի դաշտը
կ'իջնեն: Այս ժայռին կողերուն մէջ տաճար-
ներ ու պալատներ փորուած կան, որոց շտոր
ստորերկրեայ են, և գրեթէ ամենը մէկմէկէ
որիչ: Այս շինուց մէջէն ամենէն զարմանա-
լին Քիլոսի տաճարն է, որոյ արտաքին ճա-
կատը զարմանալի մեծագործութեան մը ե-
րևայթը կու տայ: Դրան երկու կողմը երկու
բարձր աշտարակներ կան, բազմաթիւ քան-
դակներով ծեփած, Գոնէն որ մէկը ներս կը
մտնէ, ընդարձակ միջոց մը կը գտնէ՝ բուն
ժայռին մէջ փորուած՝ որուն կեդրոնը կառու-
ցած է տաճարը: Այս տաճարին որոշյն չէնքը
բոլոր զարմանադարձ քանդակներով ծածկած
է, այնպէս նուրբ և ընտիր բանուած՝ որ
կրնամ ըսել թէ Աթէնքի և Հռոմաց քան-
դակներէն վար չեն մնար:

Տաճարն որ այսպէս կղզիացեալ է և բուն
ժայռին մէջ փորուած վերէն 'ի վար՝ մեծ
կամրջով մը կամ թէ ըսեմ բարձր ճամբով
մը մեծ զրանը հետ հաղորդած է: Զորս

կողմը կամարակապ օրաշներ կան, որ բուն
տաճարէն հարիւր յիսուն ոտք մեկուսի են:
Եւ այս ամենը՝ տաճարովը հանդերձ՝ որ ա-
հագին ժայռի կտորէ մը ձևացած են, այլ և
այլ օթեան կը կազմեն, ամենը իրենց պա-
տուհաններով, դռներով ու սանդուղներով:
Քիչ մը անդին, անոր չորս դին եղած գաւ-
թին ծայրը, իրեք սինազարդ սրահներ կան՝
որոց մէջ քանդակած են հնդկային դիցաբա-
նութեան պատմութիւնը: Փառաստուններկու
հսկայ արձաններ ու պատկերներ քանդակած
կան ի պատիւ դից և դիցուհեաց: Իսկ գաւ-
թին մէջ հսկայ փղորու մնացորդը կը տես-
նուին ինչպէս նաև կոթող մը: Փանդակնե-
րուն մէջէն ամենէն տարօրինակ երեցած-
ները կմախքներու խումբ մ'է, որոց միայն
պատկերին ներկայացուցմամբ կրնայ մարդ
զաղափար տալ: Ասոնց պատմութիւնը այս-
պէս կը զուրցուի աւանդութեամբ մնացած,
ինչպէս որ պատմեց ինծի հետս ընկերացած
պրահմինը:

Էլորայի լեռները ֆաբիլ մը կը բնակէր,
որ իր առաքինութիւններովը ու բարեպաշ-
տութեամբ ամեն կողմ մեծ հռչակ հանած
էր, իր ժամանակը կ'անցունէր ազօթքով ու
Պրահմայի խորհրդոց վրայ մտածական ընե-
լով, և զանազան բարեգործական գործեր ը-
նեցով: Հիւանդաց այց կ'ըլլէր, կը խնամէր,
հրաշագործութեամբ կ'առողջացնէր, տկար-
ները կը խրախուսէր, հիւանդ անասուններն
իսկ շէր մոռնար, անոնք ալ կը խնամէր. և
միշտ ամեն վայրկեան ինքզինքը կոկոն ապա-
ւառով ու լրվաթով կ'օծէր՝ որպէս զի քաւէ
այն մեղաւորաց մեղքերը որոնք փրկութեան
ճամբան մոցնելու կաշիստէր:

Տեսնելով թէ ինչպէս իր համարաւ լսողները
գինքը տեսնելու կը գիմէին, գինքը կը յար-
գէին ու մեծ զարմացմամբ իր առաքինութիւն-
ները կը գովէին. այդ ֆաբիլը՝ փոխանակ
իւր առաքինութիւնները Պրահմային նուիրե-
լու, յորմէ իբր աստուածային ազրիւր կը

բղիւէ ամենայն բան բարի, ընդհակառակն իր սիրտը հպարտութեամբ լեցուեցաւ ու միտքը դրաւ թէ այնուհետեւ ինքը անմեղանշակաւ էր. և հուսկ ուրեմն այնչափ յանդերձանեցաւ մինչև փափաղիկ իր առաքինութիւնն ներքէ փորձութեանց ենթարկել որպէս զի անոնց վրայ յաղթանակէ:

— Ահա, կ'ուրի ինքնիրեն, առանձնութեան մէջ կ'աղբիւրմ. և եթէ երբեք առանձնութիւնս կը թողում՝ միայն բարեգործութիւն ընելու համար կ'ընեմ. այդ կերպով առաքինի ըլլալ գիւրիին է: Բայց հարկ է նաև ցուցնել թէ ինչպէս կրնամ ախտախուռն հետ դէմ առ դէմ անվախ կռուիլ առանց անոնց մէ յաղթութեան: Հապա կ'ուզեմ քաղաքը իջնել և մարդոց հետ կենակցիլ, և այնպէս անկորուստ պահել իմ ժողովարանութիւնս, իմ ապաշխարանաց մահացուցումս, իմ ողորմածութիւններս և առ Պրահայ ունեցած ջերմեանդութիւնս:

Այսու առաջադրութեամբ ֆաբրին իր առանձնութեան լեռը կը թողու ու քաղաքը կ'իջնէ: Իր գալուստեան համարեւ կը տարաժուէ և ժողովուրդը իմանալով անոր դիտաւորութիւնը՝ համախումբ ընդառաւ կը վազէ ուրախութեամբ երաժշտական դրոժիններով ու կողովներով տեսակ տեսակ պտուղներ ընծայ բերելով: Բայց ֆաբրին այն ընծաները կը մերժէ, և քաղաքին ամենէն առանձնակ և աղքատին տունը կ'ընտրէ իւր բնակութեան. և այն ամեն պտուղներէն որ ժողովուրդը բերեր էր իրեն յընծայ, և ոչ տերնի մը կը դաչի. միտքը հաստատուն դրած ըլլալով յաւատեւել իւր պարզ ու մահացեալ կեանքը:

Բայց մինչդեռ իւր ժողովարան կերակրիկը ուտելու հետ էր, յանկարծ միտքը խորհուրդ մը ինկաւ:

— Եթէ, ըսաւ մտքովը, այդ պտուղներուն և ոչ համը գիտեմ, Բնչպէս կարելի է ինծի առաքինութիւն համարուի անէ՛ք չուտելու: Հարկ է մէկը անոնց ճաշակը առնում, որպէս զի անոնց քաղցը համով յիշատակը՝ աւելի արդիւնատուր ընէ իմ պահեցողութիւնս:

Այս ըսելով գեղեցիկ անանաս մը ձեռքը կ'առնու և անուշ անուշ կը ճաշակէ: Սակայն մէկ հատով գոհանալու տեղ՝ կը մոռնայ իւր առաջին չոր հացիկը՝ կ'անցնի կողովին առջև: Ինչ ու բոլոր բովանդակածը կ'ուտէ կը լնցընէ: Այս ալ անանկ որկրամոլ եղանակաւ կ'ընէ՝ մինչև կը մոռնայ իւր երեկոյեան աղթքը և կովու ապաւանով ու լրվածով ըստ սովորութեան լաւացուիլ:

Երկրորդ օրը կին մը կը տեսնէ որ զըլտուն վրայ սափոր մը դրած՝ աղբիւրը կ'երթար լուր բերելու:

— Այդ Բնչ գեղեցիկ կնիկ է՝ ըսաւ ինքնիրեն. ես ինչու պիտի չկարենամ կարգուիլ, կին առնուի:

Այս ըսելով մինչև աղբիւրը կնկան ետևէն գնաց: Բայց հոն հասու եղաւ որ այն կնիկը կարգուած էր. ուստի տխրած, մահացած՝ դարձաւ իր բնակարանը: Դուռը փակեց և երեք օր անենակէն դուրս չելաւ, երեք օր ետքը ելաւ բնակարանէն դուրս, և այլ երեք օր բնաւ անենակը չդարձաւ: Յետոյ երբ նորէն անենակը դարձաւ առանձնացաւ, երեսին զոյնը նետած էր և արինոտած զգեստը ծածկելու կ'աշխատէր: Տեսած կընկան էրիկը գանակի հարուածով սպաննած էր:

Այն ցաւալի դէպքէն երեք օր ետքը սպաննուած մարդը կը տանէին խարոյկ դնելու այրելու. իսկ անոր կնիկը՝ Պրահայի արժանատու գուտարը՝ տանողներուն ետևէն կ'երթար՝ որպէս զի՝ ըստ սովորութեան՝ ինքզինքը խարոյկին բոցին վրայ նետէ որ անդիի աշխարհը երթայ միանայ անոր հետ որ այս երկրիս վրայ իւր տէրն եղած էր. բայց ֆաբրին որ այս բանին ուշադիր էր՝ յանկարծ կնկան ու խարոյկին մէջտեղ արձանանալով՝

— Կեցէ՛ք, կանչեց, Պրահայի կամքը չէ որ այս կնիկը մեռնի. ինծի երեցաւ ու հրաժայեց որ զինքը ինծի կին առնուի:

Այն խօսքերուն վրայ դարմանը ու փափուսով տիրեց քուրմերուն ու բոլոր ականատես ժողովուրդեան վրայ: Եթէ ֆաբրին ըլլար՝ ուրիշ մարդ ըլլար այս ամբարիշտ խօսքըր կտորցողը՝ տարակոյս չկար որ զինքը կտոր կ'ընէին: Բայց իր վրայն անանկ յարգ ու համարում ունէին որ այն խօսքերը Պրահայէն շնչեալ համարեցան: Սիւղին կամ զոհը դործ չդրին. այլ քուրմերը և ժողովուրդը միարան հանգիստով զֆաբրին և իւր նոր հարսը տունը տարին:

Ֆաբրին շատ մը որդւոց հայր եղաւ. սակայն ժամանակին անցներովն իր կնկանը վրայ ունեցած սէրը պաղեցաւ, աղքատութիւնը վրան միշտ ու ձանձնութիւն կը բերէր. սըրտին մէջ սկսան փառասիրութեան ըզձեր բուսնիլ, և այնուհետեւ հարստութեանց ու մեծութեանց սաստիկ ծարաւով մը սկսաւ նեղիլ:

Որ մ'ալ նստած տխուր տրտում, այն լեռները կը մտածէր ուր երիտասարդութիւնը անցուցած էր. յանկարծ իրեն դե մը կ'երևան:

— Դու հարուստ ըլլալ կը փափագիս, ըսաւ իրեն այն խաւարի ոգին. ես ալ կ'ուզեմ ձեռքդ տալ այն միջոցներն որ նպատակիդ հասնիւ: Կրտսեր որդիդ հոս բեր և այս քարայրին մէջ փակէ. թող որ անօթութենէ

մեռնի, և ապա անոր հոգին նուիրէ այն ող-
ւոց որ այս լեռն կը բնակին: Տղուն մեռնե-
լուն պէս՝ դու ալ լի ոսկւով աման մը կ'ըն-
դուննիս, որ պարպուածին պէս իսկոյն ինքնի-
րէն նորէն պիտի լեցուի:

Փաքիրը փորձութիւնը սիրով կ'ընդունի և
երկրորդ օրը տղան առած այն քարայրը կը
տանի կը փակէ. ութ օր ետքը այն եղկելի
տղայն անհանդուրժելի տանջանքով սովածահ
կը մեռնի: Հոգին փչածին պէս՝ յանկարծ
գետնէն մոգական դրում մը վեր կը ցատկէ
ու ֆաքիրին ստըր կ'իյնայ: Դեւ իւր խոս-
տումը կատարած էր:

Ոսկիէն ետքը ֆաքիրին սիրտը մեծամեծ
չքեղ պալատներ մէկ վայրկեանի մէջ կանգ-
նած տեսնելու իղձը ինկաւ: Դեւ անմիջա-
պէս իրեն երեցաւ:

Ամեն օր, ըստ անոր, ու թոյնէն կաթիլ
մը քու պղտի աղկլանդ քանել տուր: Աղիկդ
որ մեռնի՝ դու ալ անմիջապէս մոգական պա-
ւազան մը կ'ընդունիս, որու զօրութեամբ մը-
տածելու երազութեամբ ամենազեղեցիկ պա-
լատներ կարենաս պիտի կանգնել:

Այսպէս ֆաքիրը կուրցած աղիկը կը
թունաւորէ ու կը մեռցնէ. և ի փոխարէն
կ'ընդունի խոստացուած գաւազանը, որու զօ-
րութեամբ մէկ ըրպէի մէջ կանգնուեցան է-
լորայի ստորերկրեայ պալատները:

Հուկ ուրեմն ֆաքիրին յանգնութիւնը
հասաւ այն սատիճանի մինչև փափագիլ ան-
մահութեան. հրաւիրեց դեւն որ իրեն դայ:
Դեւը եկաւ և խնդիրն որ լսեց ծիծաղելով՝

— Անմահանալու համար հարկ է ինծի
երկու հոգի տաս. կնիկդ ու մնացած աղիկդ:

Փաքիրը սկզբան չուզեց յանձն առնուլ:
Բայց ծերութիւնը նկատելով որ հետզհետէ
յառաջելու հետ էր՝ վերապէս յանձն առաւ:
Կինն ու աղիկն տուաւ դիրին. որու վրայ
դեւը ըստ իրեն.

— Այս դանակն առ ու դու քու ձեռքովդ
զարկ երկուքն ալ սպաննէ:

Այս առաջարկութեանն առջև ֆաքիրը

զարհուրած ետ քաշուեցաւ: Դեւ անոր զար-
հուրանքն տեսնելով կանչեց,

— Թէ այդպէս է՝ ուրեմն մնացի մահ-
կանացու. բայց գիտնաս որ ժամդ եկեր հա-
սեր է. ինքզինքդ մեռնելու պատրաստէ:

Այդ գուշակութեան առջև ֆաքիրն իր օ-
րոյմունքն ըրաւ. դանակը ձեռքն առաւ:
Կնիկն ու աղիկը ոտքը ինկած կ'աղաչէին որ
դիրենք չսպաննէ՝ բայց ինքը գութը մոռնա-
լով՝ դուխը մէկդի դարձուց. վերցուց դա-
նակը ու զարկաւ սպաննեց թէ իւր կնիկը և
թէ աղիկը:

Դեւ այն ատեն՝ զարհուրելի ծիծաղ մը
փրցուց ու ֆաքիրն բռնեցով,

Քեզի, ըստ, անմահութիւնը խոստացայ.
խօսքս կը պահեմ: Հէյ առաքինի մարդ. դու
որ միտքդ դրած էիր թէ առաքինութեանդ
զօրութիւնը քեզմէ կը բղխէր և ոչ երկնքէն,
անօրէն մարդ, որ առանց զութ զգալու կը
նիկդ և որդիքներդ սպաննեցիր. հապա, քա-
րացիր դու ալ անոնց հետ՝ զօրս ամբար-
տաւանութեանցդ զոհ ըրիր: Հոս, այն քարին
ներքև, հանդերձ այդ այլակերպութեամբդ,
զգացմունքդ չպիտի կորսնցնես. այդ քարա-
ցեայ մարմնիդ մէջ միտքդ ողջ պիտի մնայ,
որպէս զի ոչ միայն օրինակ՝ այլ և երկնդի
նիւթ ըլլաս այն անմիտներուն՝ որ քեզի նը-
ման չեն խղճար իրենք զիրենք ամբարտաւա-
նութեան ձեռք մատնել:

Դեւ հոգի թէ խօսքը լսեցուց, իսկոյն ֆա-
քիրը՝ հանդերձ իր կնիկովն ու օրդիքներովը
քարացան. և իրենց քարանալէն ձևացաւ
այն քարաքանդակ պատկերը որ ցայսօր կը
կոչուի ֆաքիրի քարաքանդակը: Այն օրէն
ետե իշորայի օտօրերկրեայ պալատին մէջ
յաւիտենական լուծիւն տիրեց:

Պրահմին իւր պատմութիւնը լմնցնելով
երեսն նայեցաւ վրաս ըրած տպաւորութիւնը
կարգաւ ուղեւով: Իսկ ուսումնական դիրքահա-
ւատութեանը վրայ զարմանալով ուղտը կազ-
մել տուի, ու միւսանգամ եկած ճամբէս
առջի տեղս դարձայ:

